ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.12.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/186

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝

Ս. Եղիազարյանի (լիազորագիր, տրված՝ 19.12.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.12.2019թ. թիվ 26/26-1/20427-2019 գրությամբ «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու՝ Պատվիրատու) 03.12.2019թ. թիվ 01/61-25638 գրության հիման, վրա 12.12.2019թ. թիվ 26/26-1/20427-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող

անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին (հետայսու՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի կողմից գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/186 ընթացակարգի շրջանակներում 20.12.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.12.2019թ. թիվ 01/61-25638 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից 04.10.2019 թվականին կազմակերպվել է ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/195 ծածկագրով քաղցրավենիքի փաթեթների գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ն և գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով վերջինս ճանաչվել է ընտրված մասնակից:

Օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո, 01.11.2019թ., Ընկերությանը ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել պայմանագիրը և պայմանագրի ապահովումը: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Մասնակիցը զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/186 ընթացակարգի շրջանակներում 20.12.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/186 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/186 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից քաղցրավենիքի փաթեթների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/195» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.10.2019թ. ժամը 09:25-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերությունը Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, իսկ 25.10.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ նաև ընտրված մասնակից և որոշվել է Ընկերությանը ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

3. Պատվիրատուն 01.11.2019թ. armeps.am համակարգով «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին ուղարկել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/195» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.11.2019թ. ժամը 10:20-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ Ընկերության կողմից մինչև 15.11.2019թ. չի ներկայացվել իր կողմից ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը: Միաժամանակ արձանագրել է, որ հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, Ընկերությունը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.12.2019թ. թիվ 26/26-1/20427-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 03.12.2019թ. թիվ 01/61-25638 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ

և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: ***Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:***

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ

հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ և 14-րդ ենթակետերի համաձայն՝

13) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

14) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Երևանի քաղաքապետարանի կողմից քաղցրավենիքի փաթեթների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/195» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ն

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.10.2019թ. ժամը 09:25-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերությունը Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, իսկ 25.10.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ նաև ընտրված մասնակից և որոշվել է Ընկերությանը ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Պատվիրատուն 01.11.2019թ. armeps.am համակարգով «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին ուղարկել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/195» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.11.2019թ. ժամը 10:20-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ Ընկերության կողմից մինչև 15.11.2019թ. չի ներկայացվել իր կողմից ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը: Միաժամանակ արձանագրել է, որ հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, Ընկերությունը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.5-րդ ենթակետով նախատեսվել է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

Նույն կետի 8.6 ենթակետով նախատեսվել է, որ Պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

Այսպիսով, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գործի բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությամբ պայմանավորված դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ պարզելու համար արդյոք Ընկերությանն Երևանի քաղաքապետարանի կողմից 01.11.2019թ. ոչ ավտոմատ ծանուցում՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ, ուղարկվել է, թե՝ ոչ:

Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/195» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի՝ armeps համակարգում գրանցած samali0103@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 01.11.2019թ. ժամը 15:22-ին ուղարկվել է էլեկտրոնային ուղերձ նամակ:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ն, 01.11.2019թ. armeps.am համակարգով ստանալով պայմանագիր կնքելու առաջարկը և Օրենքով սահմանված ժամկետում չստորագրելով այն, թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.12.2019թ. թիվ 26/26-1/20427-2019 գրությամբ «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**